ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՍԻՆ

ՅԱԿՈԲ ԱՆԱԳՋԵԱՆԻ

1861 թ. ապրիլի 26-ն էր։ Առաջին դասից վերջ—մենք օրական միայն երկու դաս ունէինք, մէկը մինչև ճաշը, միւսը ճաշից վերջ—ծխական քահանայի առաջնորդութեամբ մի երիտասարդի ու մի պատանու հետ միասին մեր Ներքին-Ագուլեաց ուսումնարանը մտաւ մի վարդապետ։ Փոքրիկ վեղարը, պարզ հագուստը, դրաւիչ, բնական, ոչ փքուն, խօսակցութիւնը հէնց առաջին րոպէից մեզ, աշակերտներիս, նկատել տուին, որ նորեկ վարդապետը մեր տեսածներից չէ։

Ուսուցչին և մեզ ողջունելուց վերջ հայր-սուրբը մի պտոյտ արաւ դասատեղը, նայեց դասացուցակին և մի-երկու դասագրքերին, կարդացնել տուեց մի քանի տող այս ու այն աշակերտին և խօսեց մի-երկուսի հետ։ Նրա դէպի մեզ վերաբերումը այնքան քաղցր, այնքան հայրական էր, որ մենք հիացած էինք։ Մինչև այդ՝ մենք ուրիշ համոզում ունէինք մեզ այցելող վարդապետների և եպիսկոպոսների մասին։ Մենք տեսել էինք, որ մեր ուսումնարանում նրանք պարբերաբար լսանում էին միայն նրա համար, որ նախապէս պատրաստած իրանց զէնքով—քերականական վերլուծութեան մի զարտուղի, անկանոն կանոնով—լաղթեն, ամաչեցնեն մեզ՝ աշակերտներիս, լաճախ մեր ծնողաց ներկայութեամբ, և խրոխտաբար ցոյց տան իրանց քերականական խորին հմտութիւնը։

Մեր ուսումնարանի լուսամուտների առջև բացուող հեռանկարը ներկայացնում է մի ընդարձակ դաշտ, որը վերջանում է երեզանման ընդգրկող Երասխ գետով։

Ահա այդ տեսարանի առջև կանգ առաւ մեր այցելուն, դիտեց, զմայլուեց, գովեց և վերջ, դառնալով մեր ուսուցչին՝ հարցրեց.

—Աշակերտներդ աղգալին երգ գիտեն։

—Ը·Ը·Ը··· եկեղեցական երգեր գիտեն։

Ուսուցչի բախտիցն էր, որ հայր-սուրբը ցանկութիւն չպատնեց եկեղեցական երգեր լսելու, թէ ոչ՝ խեղճը շատ պիտի կարմրէր։

—Մարգար, ասաց վարդապետը՝ դիմելով իրան ուղեկցող պատանուն, երգէ «Նորաբոլս խայրիք»։ Եւ ահա հնչեց Մարգարի զիլ ու լատուկ ձայնը.

Նորաբոլս խայրիք, մանկունք Հայկայ,
Օ՛ն, մատիք լոյս վեհ հանդէս.
Զի զարթուն հոգին հայրենասէր
Ի Մասեաց դիմէ լայս վայր....։

Մենք ամենքս ականջ դառած՝ բերանբաց լսում էինք։

—Երգէ «Որդիք Հայկայ»։

Նոյն հիացումով մենք լսեցինք։

«Որդիք Հայկայ, որդիք փառաց,
Զարթիք, կոչէ զձեզ Աստուած.
Ցեսէք Մասեաց ի գլուխ ազատ
Զբախտ Հայոց նորահրատ»....։

Մինչև այդ ժամանակ մենք բացի մի քանի եկեղեցական «տաղերից», աշուղական «մուխամմազներից» ու թուրքերէն «խաղերից» ոչ մի երգ չէինք լսել։

Հայր-սուրբը չբաւականանալով մեզ ազգային երգերի ճաշակ տալով՝ մեր ներկայութեամբ Մարգարին—որը մի աշխոյժ և վառվռուն պատանի էր—պատուիրեց, որ քանի իրանք մեր դիւղումն են՝ ամեն օր գալ ուսումնարան և այդ երկու երգը սովորցնէ մեզ։

Մինչ այդ մեզ հիացնող հիւրերը մեկնում էին ուսումնարանից՝ ուսուցիչը ժամանակ դտաւ առաջնորդող քահանային հարցնելու վարդապետին ով լինելը։

Խրիմեան անունը մեզ անասելի ուրախութիւն պատճառեց։ Նա նոր չէր մեզ համար։ Մենք ոչ թէ ծանօթ էինք «Արծիւ Վասպուրականի» հետ, այլ և ծայրէ ի ծայր կարդացել էինք «Հրաւիրակ Արարատեանը» և «Հրաւիրակ երկրին աւետեաց»։ Բայց միևնոյն ժամանակ շատ ցաւեցինք, որ վալելուչ կերպով չէինք ընդունել մի այցելու, որին ի սրտէ պաշտում էինք։ «Վալելուչ կերպով» ընդունել նշանակում էր դիմաւորել հիւրին նախապէս պատրաստած ճառով, ուղերձով և ուրիշ անուններ կրող ոտանաւորներով, որոնք այդ տարիները ամենայն առատութեամբ թխում էին մեզ մօտ Ազգոց ճարտասանութեան կաղապարների վերայ ամեն մի՝ նոյն իսկ չնչին դէպքի առիթով։

Հասկանալի է, որ մենք՝ «երեցագոյն» աշակերտներս չէինք կարող հանդուրժանալ առանց արտայայտելու մեր հիացմունքը և համակրութիւնը մեզ այնքան ոգևորող «Հրաւիրակ Արարատեանի» հեղինակին։ Եւ ահա եր-

կու օրում պատրաստ էր մի ոտանաւոր «Գողթն առ Արծուին Վասպուրական» որով Գողթն գաւառը ողջունելով «Վասպուրական Արծուն» գալուստը՝ նրա ալեկոծած հայաբնակ քաղաքների մասին զանազան հարցմունքներ էր անում և իւր որդոց մասին խնդրում՝

«Ցանո՛ դու սիրոյ, ուման զօրութիւն
Եւ զաղբիւր բարեաց՝ զմիաբանութիւն,
Եւ ցոյց, թէ սոքօք ինչպէս մեր նախնիք
Ազատուեցին մեր քաղցր հայրենիք»։

Իմանալով որ Խրիմեանը երկրորդ ալեկոծութիւն չպիտի անէ մեր ուսումնարանին՝ աշակերտներս պատգամաւորութեան ձեռքով մատուցինք նրան մեր «ուղերձը» գիւղական քահանայի տանը, ուր իջևանած էր նա։ Խրիմեանը ամենայն քաղցրութեամբ ընդունեց մեր «ուղերձը», իսկոյն աչքէ անցուց, չնորհակալ եղաւ, օրհնեց մեզ, հրամայեց սպասաւորին մի մի բաժակ թէյ բերել մեզ համար և ընծայեց մի գիրք, որը ի ցաւ մեր սրտին ուսուցիչը իրան սեփականեց—և յանձնելով մեր «ուղերձը» կողքին կանգնած երիտասարդին՝ «Գարեգին, կը պատասխանես» ասաց։

Երիտասարդ Գարեգինը, որ Գարեգին (յետոյ եպիսկոպոս) Սրուանձտեանն էր—ի դիմաց «Վասպուրական Արծուն» պատասխանելով Գողթն գաւառին՝ ի միջի այլոց ասում էր՝

Արծուն պարտքն է իւր հայրենիք.
Եւ դու, ո՛վ Գողթան, դու ևս հայրենիք,
Նա թէ առանց քեզ՝ անցնէր ու գնար
Քո սիրոյ համար կրկին տի դառնար։
Այո՛, սէր ազգին է նորա վախճան,
Նա ի սէր ազգին է նվիրական.
Նկաւ և քո մէջ նոր եռանդ շընչել,
Նոր հոգի, նոր սէր գիտութեան վառել,
Նոր կապ գիտութեան ոլորել, հիւսել,
Քո որդիք քո ծոց ժողովել, ածել։

Ես քո որդիքներ գովեցի արդէն,
Նոքա քեզ սիրեն, քեզ բարիք կը խնդրեն.
Թէև իրա՛ւ է, դեռ ուսում չկայ,
Բայց նոցա վաստակ մեծ չոլսեր կուտայ։

Դոքա գիտցան, որ էլ այսուհետև
Անուսումն չունի մարդոց մէջ մի տեղ,
Եւ ջանան լառաջ վարել օրէ օր
Քո ուսումնարան, քո ջահ լուսաւոր։

Դոքա՝ որ հեռու ուրիշ քաղաքներ
Կերթան, կը տեսնեն ուսման բարիքներ,
Ցեսած են դոքա, թէ ինչ երջանիկ
Է ուսեալ ազգաց վատակն ու քրտինք։

Այս դարուս վճիռն է ահիսեալի
Ուսումն է լաղթող, սուսերք ժանգոտին,
Այսպէս սուրբ նախնիք, իմաստութեամբ լիք
Սիրով պահէին իրանց հայրենիք։

Այս պատասխանը մեր ուսուցչի ձեռքով մեզ կարդացուելուց յետոյ՝ մեր ուսանողների հետ միասին ուղարկեց «Կռունկ»-ին ի հրատարակութիւն (1861 թ. Զ.)։

Խրիմեանը մնաց մեզ մօտ մի շաբաթ։ Ս. Ղազարոսի յարութեան վերջանակի օրը նրա խօսած քարոզը այնքան հոգեբուղխ, այնքան ազդու էր, որ նրա մի քանի կտորները մինչև այսօր բառ առ բառ լիշում են տեղացիք՝ չնայելով որ այդ ժամանակից անցել են 32 երկար տարիներ։ Մաղկազարդ երեկոյեան նորա կատարած դռնաբացէքի հանդէսը այնքան սրտաշարժ էր, որ ծերունիներից շատերը արտասուում էին։

Խրիմեանի մեկնելու օրը գիւղի մեծագոյն մասը ժողովել էր նորա աչքը համբուրելու և օրհնութիւն առնելու։ Մենք՝ աշակերտներս ճանապարհ դրինք նրան արտասուքը աչքերիս։ Ես՝ որ լաճախ առիթ ունեցած էի հօրս դէպի պանդխտութիւն ճանապարհ դցելու—և ոչ մի անգամ այդքան զգացած չէի։

Աչքուհեան ամեն տան, ամեն փողոցում, ամեն ալգիում «Նորաբոյս խաչիկ» և «Որդիք Հալկայ» երգերն էին՝ որ լսում էին թոթովող մանուկներից սկսած մինչ բոլոր պատանիների բերանից. մինչև որ նոյն տարին Խրիմեանի յանձնարարութեամբ նրա հայրենակից Մեսրովբ քահ. Փափազեանը ուսուցչութեան հրաւիրելով՝ եկաւ հարստացնելու մեր երգերի պաշարը ուրիշ շատ երգերով։

Ահա թէ ով առաջինը երգել սովրեցրեց Խորենացու «Գողթան երգիչների» թոռներին։